ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների"

Իրականացման ժամանակահատված: 01.02.2021 - 31.01.2024

ԱլԳ երկրներ:

Armenia

Ընդհանուր բյուջե: € 705 882

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Hilfswerk International

Նախագծի նկարագրություն:

«Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» («Միասին հանուն սոցիալական համայնքների») ծրագիրը նպատակ ունի հաղթահարել աղքատությունը և անհավասարությունը Հայաստանում՝ մշակելով և ներդնելով կարիքահեն և կայուն տեղական սոցիալական ծրագրեր, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող նպատակային և կայուն սոցիալական ծառայություններ ի շահ Հայաստանի մարզերի աղքատ և անապահով ընտանիքների:

Ակնկալվող արդյունքներ:

1. Թիրախ համայնքներում առկա են կարիքահեն տեղական սոցիալական ծրագրեր՝ ուղղված տնտեսապես ոչ կայուն և խոցելի բնակչության աղքատության հաղթահարմանը:
2. Առկա են բազմաչափ աղքատության հաղթահարմանն ուղղված սոցիալական ծառայությունների որակի ստանդարտներ և պետական ֆինանսավորման թափանցիկ մեխանիզմներ՝ լայնորեն ներդված թիրախ համայնքների և պետական կառավարման մարմինների կողմից:
3. Սոցիալական ծառայություններ տրամադրողները բավականաչափ կարողունակ են մատուցելու ծառայությունների որակի ստանդարտներին և տեղական սոցիալական ծրագրերին համահունչ ծառայություններ:
4. Քաղաքացիական հասարակության դերակատարները ակտիվորեն ներգրավված են տեղական սոցիալական քաղաքականության մշակման և դրանց մոնիթորինգի գործընթացներում, ինչպես նաև ունեն ամուր գործակցություն ոլորտի համայնքային, տարածաշրջանային և հանրապետական դերակատարների հետ: